

Միրելի Անդամներ,

Իբրեւ մշակներ Աստուծոյ այգիին, հաւաքուած ենք այսօր վայելելու համար մեր տան տարեկան հոգեւոր հունձքը որ ձեռք բերուեցաւ 1962 տարեշրջանին մեր բոլորին շնորհով: Ներկայ տարեկան գործունէութեանս ամփոփ տեղեկագիրն է:

Կրօնական Պաշտամունք

Անցնող տարուան ընթացքին կանոնաւոր կերպով ամիսը մէկ անգամ կատարուեցան մեր կրօնական պաշտամունքները: Ձանք տարած ենք որ եկեղեցական արարողութիւնները կատարուին անթերի եւ հանդիսաւոր: 1962-ին նոյեմբերին սկսանք ձաշու ժամերգութիւն կատարել ամէն կիրակի առաւօտ Կիրակնօրիայ Դպրոցէն վերջ, որ ուրախ եմ ըսելու լաւ արդիւնք տուաւ: Այս տարի առաջին անգամ ըլլալով ունեցանք Ծննդեան ձրագալոյցի արարողութիւնը, խմբան երեկոն մեր սեփական Մատուռին մէջ: Ձերմապէս կը գնահատենք Եկեղեցւոյս Ուրարակի Կարպիս Պալտրեանը, Դպրապետ Ստեփան Սարաֆեանը, երգահանահար Տիկ. Հայկանոյ Ձէքէմեանը եւ Դպրաց Դասի բոլոր անդամները որոնք հաւատարմօրէն կը բերեն իրենց մասնակցութիւնը եւ զմայլելի երգեցողութիւնը մեր պաշտամունքներուն:

Ծիսակատարութիւն

Անցնող տարեշրջանին ունեցած ենք երկու մկրտութիւն եւ երկու թաղում: Այս առթիւ կը փափաքիմ յիշել նաեւ Եկեղեցւոյս շէնքին Հիմնարկէքի օրհնութիւնը որ տեղի ունեցաւ Դեկտեմբեր 2, 1962ին ձեռամբ Գերշ. Տ. Միոն Արք. Մանուկեանի: Ամառուան երեք ամիսներուն ընթացքին մեր մէջ ունեցանք Հոգշ. Տ. Թորգոմ Վրդ. Մանուկեանը (այժմ եպիսկոպոս եւ Առաջնորդ Գալիֆորնիոյ Թեմին) որ պատարագով, կիրակօրիայ պաշտամունքներով եւ դասախոսութիւններով հոգեւորապէս մխիթարեց մեր ժողովուրդը:

Այցելութիւններ

Չանացած ենք չթերանալ ու ժամանակին կատարել մխիթարական ու ցաւակցական այցելութիւններ, մասնաւորաբար հիւանդանոցները: Տուած ենք ընդամենը 280 130 այցելութիւններ հետեւեալ առիթներով. - Հիւանդ 27, սգաւոր 3, ընտանեկան հարցեր 19, քոյր եկեղեցիներու 4, իսկ տօնական եւ այլ առիթներով 77:

Ժողովներ

Անցնող շրջանին մեր եկեղեցւոյ կապակցութեամբ ներկայ եղած ենք 70 ժողովներու:

Եկեղեցւոյս Թերթիկը

Անցնող Սեպտեմբերին Ծիսական Խորհուրդիս կարգադրութեամբ սկսանք վերահրատարակել Ծուխիս Թերթիկը - ՓԱՐՈՍ - Հայերէն եւ Անգլերէն լեզուներով, որ դարձած էր 1956-ին: Աւրախ ենք ըսելու որ շուտով գետին գտաւ այս Թերթիկը եւ այժմ ամսէ-ամիս կ'սպասուի տուներէ ներս: Այս Թերթիկը առաւել ծախք մըն է Ծիսական Խորհուրդին վրայ եւ անհատական նուէրներ մեծապէս կը գնահատուին: Ձեռնարկներու եւ այլ առիթներով ղրկած ենք մասնաւոր յայտարարութիւններ:

Կրօնական Դասընթացք

Առաջնորդ Սրբազան Հօր կարգադրութեամբ եւ արտօնութեամբ ընթացիկ տարուան ընթացքին շարունակեցինք հետեւիլ կրօնական դասընթացքներու ձան Գէըլլ Համալսարանին մէջ:

Պատգամաւորական Ժողով

Ներկայ եղանք մեր Թեմին տարեկան Պատգամաւորական Ժողովին, որ տեղի ունեցաւ 5-6 Մայիս, 1962, Նիւ Եորքի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցիին մէջ: Պատգամաւորական Ժողովի նախորդող երկու օրերուն տեղի ունեցաւ Հոգեւորականաց Ժողովը, նախագահութեամբ Առաջնորդ Սրբազան Հօր, եւ ներկայութեամբ շուրջ 30 հոգեւորականներու եւ ընծայացու ուսանողներու:

Դպրաց Դասերու Միութիւն եւ Հայ Եկեղեցւոյ Երիտասարդաց Կազմակերպութիւն

Սեպտեմբերի 1-2-ին Հայ Եկեղեցւոյ Երիտասարդաց Կազմակերպութեան իսկ Հոկտեմբերի 27-28-ին Դպրաց Դասերու Միութեան տարեկան համագումար ներուան բերինք մեր մասնակցութիւնը: Դպրաց Դասերու Համագումարէն վերջ ներկայ եղանք Ս. Ներսէս Շնորհալի Աստուածաբանական Վարժարանի բացման հանդիսութեանց Հոկտեմբերի 28-ին: Կը փափաքինք ձեր ուշադրութեան յանձնել կէտ մը որ վերջերս մասնաւոր ուշադրութեան առարկայ դարձուցած է ԾխակաՄ Խորհուրդս: Մօտատենէն պիտի ունենանք մեր սեփական եկեղեցիին բայց դժբախտաբար եկեղեցւոյ մը արարողութեանց կարեւոր մէկ մասը կազմող դպրաց դասը օրէօր կը տկարանայ: Կը թելադրենք որ անդամ ըլլաք եւ զօրացնէք այս կարեւոր մասնիկը եկեղեցիին:

Ամառնային Դասընթացք

Անցեալ ամառուան երեք ամիսներու ընթացքին, Առաջնորդ Սրբազան Հօր հրամանով եւ Ծխական Խորհուրդին բարեհաճ կարգադրութեամբ Ս. Ներսէս Աստուածաբանական Վարժարանը գացինք ի Եվրոսթըն գրաբառ, շարականագիտութիւն եւ ծիսագիտութիւն ուսանելու:

Մասնաւոր շնորհակալութիւն կ'ուզենք յայտնել մեր սիրելի Տթթ. Գեղամ Կէօքճեանին ինչպէս նաեւ Ծխական Խորհուրդի միւս անդամներուն որոնք զօրավիգ կանգնեցան մեզի անցնող տարեշրջանին օգտակար ըլլալով ամէն կերպով:

Այս նոր Տարուայ սեմին մեր բոլորին գերագոյն պարտականութիւնը պէտք է ըլլայ անդրադառնալ այն հսկայ աշխատանքին եւ նուիրումին որ մեզմէ իւրաքանչիւրը պիտի բերէ յառաջիկային Աստուծոյ օգնութեամբ եւ առաջնորդութեամբ մեր Սուրբ Եկեղեցւոյ շինութեան, պայծառութեան եւ բարգաւաճման համար: Բոլորս ալ առաւել կամ նուազ պաշտօններ ունինք այս համայնքին մէջ, մեր հայրերու հաւատքը եւ մեր ազգային ժառանգութիւնները պահելու եւ յաւերժացնելու: Աստուծոյ այգիին մէջ շնանք ըլլալ հաւատաւոր, օգտակար եւ բարի մշակներ ու քաւագոյնս արդիւնաւորենք մեր պարտականութիւնները: Մեր նախահայրերը հաւատքով ապրեցան, ստեղծագործեցին ու կտակեցին իրենց մտքին ու հոգիին արդիւնքները: Ծարունակենք անոնց սուրբ գործը եւ նախանձախնդիր ըլլանք մեր հոգեւոր ժառանգութեանց պահպանման: Ներկայիս մեր եկեղեցւոյ ամենէն հռատակ հարցը շէնքին շինութիւնն է: Ջանանք մեր լուրջ մտածողութեան առարկայ ընել այս խնդիրը եւ նուիրենք մեր բոլոր ջանքերը այս կոթողական գործին յաջողութեան համար: Սրտագինս կ'աղօթենք որ Աստուծոյ հովանիներն անպակաս ըլլայ մեր բոլորին վրայէն, զօրացնէ զմեզ, աւելցնէ մեր եռանդը եւ օրհնէ մեր սրտին ու մտքին աշխատանքները: Ամէն:

*Զեյնաբ Այ. Մկրտչյան*